ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2020 թվականի N 2083

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ 12/2 ՀԱՍՑԵԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Նժդեհի փողոցի թիվ 12/2 հասցեի հյուսիսային մասում գտնվող 0,00032հա մակերեսով հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Նժդեհի փողոց, թիվ 12/2-3 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2020 թվականի N 2084

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼԱՋՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 45/1-7 ՀԱՍՑԵԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր քաղաքի Լազյան փողոց թիվ 45/1-7 հասցեի արևմտյան մասում գտնվող 0,00092հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Լազյան փողոց, թիվ 45/7-7 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2020 թվականի N 2085

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ ԹԱՂԱՄԱՍ, 7-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 12/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Տավրոս թաղամաս, 7-րդ փողոց, թիվ 12/1 հասցեում գտնվող 0,03156հա մակերեսով հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տավրոս թաղամաս, 7-րդ փողոց, թիվ 12/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2020 թվականի N 2086

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Գ.ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 52-1/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՌԱՆԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՆԻ ԾԱՏԻՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վահրամ Վարդանի Ծատինյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22102020-06-0028 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով, 35-րդ կետի գ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Գ.Լուսավորչի փողոց թիվ 52-1/10 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 11.39քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 9.76քմ) մառանը 59230 (հիսունինը հազար երկու հարյուր երեսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 11.39քմ մակերեսով հողամասը 51530 (հիսունմեկ հազար հինգ հարյուր երեսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Վահրամ Վարդանի Ծատինյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Վահրամ Վարդանի Ծատինյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել մառանի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2020 թվականի N 2087

«ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ավագանու 07 հունիսի 2016 թվականի թիվ 33-Ն որոշմամբ հաստատված կարգը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ, 37-րդ և 84-րդ հոդվածներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. «Վանաձոր համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի հաստատման մասին» Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ կազմակերպել հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ՝ 2020 թվականի նոյեմբերի 12-ից մինչև նոյեմբերի 27-ն ընկած ժամանակահատվածում:

2. Համայնքապետարանի պաշտոնական ինտերնետային կայք էջում տեղադրել հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների հրավեր, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում:

3. Հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների օր նշանակել 2020 թվականի նոյեմբերի 27-ը:

4. «Վանաձոր համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի հաստատման մասին» Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների վարման համար համայնքի ղեկավարի ներկայացուցիչ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2020 թվականի N 2088

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ ԿԱՐԵՆ ՏԻԳՐԱՆԻ ԱՇՈՒՂԱԹՈՅԱՆԻ ԵՎ ԴԱՎԻԹ ՏԻԳՐԱՆԻ ԱՇՈՒՂԱԹՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տիգրան Կառլենի Կոծինյանի դիմումը՝ անչափահասներ Կարեն Տիգրանի Աշուղաթոյանի և Դավիթ Տիգրանի Աշուղաթոյանի նկատմամբ հոգաբարձություն սահմանելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2020թ. հոկտեմբերի 6-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 15, կետ 1), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 35-րդ հոդվածով՝ ***որոշում եմ***.

Վանաձոր քաղաքի Պ.Սևակի փողոցի թիվ 43 շենքի 26 բնակարանի բնակիչ Տիգրան Կառլենի Կոծինյանին (ծնված՝ 12.09.1974թ., անձնագիր AR 0257767, տրված՝ 06.04.2017թ., 052-ի կողմից) նշանակել անչափահասներ Կարեն Տիգրանի Աշուղաթոյանի (ծնված՝ 14.05.2005թ., ծննդյան վկայական՝ ԱԱ 047699, տրված՝ 27.06.2005թ., ՔԿԱԳ Սպիտակի տ/բ-ի կողմից) և Դավիթ Տիգրանի Աշուղաթոյանի (ծնված՝ 28.03.2003թ., ծննդյան վկայական՝ ԱԱ 376913, տրված՝ 19.05.2003թ., ՔԿԱԳ Սպիտակի տ/բ-ի կողմից) նկատմամբ հոգաբարձու մեկ տարի ժամկետով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 13
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2020 թվականի N 2089

ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի ԹԻՎ 97/2-140 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Յուրի Ռահիմի Հարությունյանի դիմումը և նույնականացման քարտը, ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Շինարարներիփողոցի թիվ 13 շենքի թիվ 51 բնակարանի վերաբերյալ Վանաձորի քաղաքապետի 1997 թվականի մայիսի 16-ի «Բնակարանի սեփականաշնորհման մասին» թիվ 97/2-140 որոշման մեջ կատարել հետևյալ ուղղումները.

1. Որոշման նախաբանում «Յուրիկ Ռաֆիկի Հարությունյանը» բառերը փոխարինել «Յուրի Ռահիմի Հարությունյանը» բառերով:

2. Որոշման 1-ին կետի աղյուսակում «Հարությունյան Յուրիկ Ռ.» բառերը փոխարինել «Հարությունյան Յուրի Ռահիմի» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 13
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 նոյեմբերի 2020 թվականի N 2090

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի <<ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 82 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 20-ի «Վանաձոր համայնքի 2020 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 82 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 16
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2020 թվականի N 2091

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱԻՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3-4/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆԱՀԻՏ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Արամայիսի Ալեքսանյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06102020-06-0031 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Նաիրի փողոց թիվ 3-4/7 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 18.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 16.75քմ) ավտոտնակը 37800 (երեսունյոթ հազար ութ հարյուր) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 53.0քմ մակերեսով հողամասը 155820 (հարյուր հիսունհինգ հազար ութ հարյուր քսան) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Անահիտ Արամայիսի Ալեքսանյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Անահիտ Արամայիսի Ալեքսանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 17
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2020 թվականի N 2092

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 59-3/13 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԴԱՎԻԹ ՄԵՍՐՈՊԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դավիթ Մեսրոպի Ասատրյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23102020-06-0016 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 59-3/13 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 18.5քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 16.99քմ) ավտոտնակը 38850 (երեսունութ հազար ութ հարյուր հիսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 18.5քմ մակերեսով հողամասը 54390 (հիսունչորս հազար երեք հարյուր իննսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Դավիթ Մեսրոպի Ասատրյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Դավիթ Ասատրյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 17
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2020 թվականի N 2093

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ (ՆԱԽԿԻՆ ԺԴԱՆՈՎ) ԹԱՂԱՄԱՍ 21 ՓՈՂՈՑ ԹԻՎ 25 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼՅՈՎԱ ՄԻՀՐԴԱՏԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լյովա Միհրդատի Նավասարդյանի (ծնված՝ 22.04.1942թ.) դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, անհատական բնակելի տան 28.03.1987թ. տեխնիկական անձնագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 20.10.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-153/20 Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին ժդանով) թաղամաս 21 փողոց թիվ 25 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1165.0քմ և դրան կից 117.0քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1987-1990թ.թ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1282.0քմ:
Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Լյովա Միհրդատի Նավասարդյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին ժդանով) թաղամաս 21 փողոց թիվ 25 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1165.0քմ մակերեսով հողամասին կից 117.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Ճանաչել Լյովա Միհրդատի Նավասարդյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին ժդանով) թաղամաս 21 փողոց թիվ 25 հասցեի 1282.0քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին ժդանով) թաղամաս 21 փողոց թիվ 25 հասցեի հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տավրոս թաղամաս, 21 փողոց, թիվ 25/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 17
ք. Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2020 թվականի N 2094

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 54 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐԱՄ ՄԻՔԱՅԵԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԵՎ ՌՈԲԵՐՏ ՄԻՔԱՅԵԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 01 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1811 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արամ Միքայելի Գրիգորյանի և Ռոբերտ Միքայելի Գրիգորյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14092020-06-0050 վկայականը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով և 32-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել օրինական Արամ Միքայելի Գրիգորյանին և Ռոբերտ Միքայելի Գրիգորյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց թիվ 54 հասցեում գտնվող 885.9քմ մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 3.21քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 2.42քմ) բնակելի տունը և 14.90քմ մակերեսով բաց պատշգամբը՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Արամ Միքայելի Գրիգորյանի և Ռոբերտ Միքայելի Գրիգորյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը 3.21քմ արտաքին մակերեսով բնակելի տան համար 8350 (ութ հազար երեք հարյուր հիսուն) դրամ և 14.90քմ մակերեսով բաց պատշգամբի համար 38740 (երեսունութ հազար յոթ հարյուր քառասուն) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Տարանջատել Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց թիվ 54 հասցեում Արամ Միքայելի Գրիգորյանին և Ռոբերտ Միքայելի Գրիգորյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած հողամասը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

4. Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց թիվ 54 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա) 0.044295հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 392.25քմ ընդհանուր մակերեսով շինությունների փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Աբովյան փողոց, թիվ 54 բնակելի տուն (հատակագիծ թիվ 1).

բ) 0.044295հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 161.68քմ ընդհանուր մակերեսով շինությունների փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Աբովյան փողոց, թիվ 54-1/1 բնակելի տուն (հատակագիծ թիվ 2):

5. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 01 հոկտեմբեր 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց թիվ 54 հասցեում Արամ Միքայելի Գրիգորյանին և Ռոբերտ Միքայելի Գրիգորյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող բնակելի տունը և դրա զբաղեցրած հողամասը որպես երկու առանձին գույքային միավորներ տարանջատելու և փոստային հասցեներ տրամադրելու մասին» թիվ 1811 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 17
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2020 թվականի N 2095

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՔԻՄԻԱԳՈՐԾՆԵՐԻ 1-ԻՆ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱԳԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գագիկ Գուրգենի Հարությունյանի (ծնված՝ 27.05.1956թ.) դիմումը, 25.03.1987թ. տրված տեխնիկական անձնագիրը, 19.02.2014թ. տրված սեփականության իրավունքի թիվ 831 և ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 832 վկայագրերը, 06.11.2017թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 5280 (նոտարական ակտի կոդ: 741-20171129-84-1992079) վկայագիրը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Քիմիագործների 1-ին թիվ 4 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 394.0քմ մակերեսով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1958-1965թթ.:
Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Գագիկ Գուրգենի Հարությունյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Քիմիագործների 1-ին թիվ 4 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 394.0քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Հաստատել Վանաձոր քաղաքի Քիմիագործների 1-ին թիվ 4 հասցեում գտնվող բնակելի տան փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Քիմիագործների 1-ին փողոց, թիվ 4 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2020 թվականի N 2096

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ ՓՈՂ ԹԻՎ 29 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆՈՐԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՐԱԾՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նորիկ Սերյոժայի Սահակյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1944651 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Գր.Լուսավորիչի փող թիվ 29 հասցեում գտնվող Նորիկ Սերյոժայի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Գր.Լուսավորչի փողոց, թիվ 29-29/4 տարածք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 17
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2020 թվականի N 2097

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓՈՂ ԹԻՎ 29 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆՈՐԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՐԱԾՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նորիկ Սերյոժայի Սահակյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1881763 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Լուսավորչի փող թիվ 29 հասցեում գտնվող Նորիկ Սերյոժայի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Գր.Լուսավորչի փողոց, թիվ 29-29/5 տարածք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 17
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2020 թվականի N 2098

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 12 ՀՈՒՆԻՍԻ 2019Թ. ԹԻՎ 96 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ 13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020Թ. ԹԻՎ 86 ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏՈՒՄ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 12 հունիսի 2019թ. թիվ 96 շինարարության թույլտվությունը, Վանաձոր համայնքի ղեկավարի 13 նոյեմբերի 2020թ. թիվ 86 ավարտական ակտը (շահագործման թույլտվություն) և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր համայնքի ղեկավարի 12 հունիսի 2019թ. թիվ 96 շինարարության թույլտվության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) «2-րդ կատեգորիա» բառերը փոխարինել «3-րդ կատեգորիա» բառերով.

բ) «626,64քմ» բառերը փոխարինել «902,5քմ» բառերով:

գ) «պահեստի և պահակակետի» բառերը փոխարինել «պահեստի, պահակակետի և ծածկարանի» բառերով:

2. Վանաձոր համայնքի ղեկավարի 13 նոյեմբերի 2020թ. թիվ 86 ավարտական ակտում (շահագործման թույլտվություն) «պահեստ և պահակակետ» բառերը փոխարինել «պահեստ, պահակակետ և ծածկարան» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 17
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2020 թվականի N 2099

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՐ.ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 40 ՇԵՆՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԱՌԱՆԻ, ԾԱԾԿԻ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՄԱՌԱՆԸ, ԾԱԾԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդգար Գուրգենի Հակոբյանի դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-Ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով՝ ***որոշում եմ***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Գր.Լուսավորչի փողոցի թիվ 40 շենքի արևելյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 14.62քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 13.5քմ) մառանի, 15.98քմ մակերեսով ծածկի և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 30.6քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մառանի, ծածկի և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված մառանի, ծածկի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին մառանը, ծածկը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Գր.Լուսավորչի փողոցի թիվ 40 շենքի արևելյան մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ք. Վանաձոր, Գր.Լուսավորչի փողոց, թիվ 40-9/9 մառան և ծածկ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2020 թվականի N 2100

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼԱԶՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 35 ՇԵՆՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մեր Արամայիսի Խասիկյանի դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Լազյան փողոց, թիվ 35 շենքի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 33.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 28.78քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 33.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Լազյան փողոց, թիվ 35 շենքի հյուսիսային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Լազյան փողոց, թիվ 35/14/1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2020 թվականի N 2101

«Ռ ԵՎ Հ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ԻՆ ԹԻՎ 2 ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՐԹՈՒՂՈՒՄ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով մրցութային հանձնաժողովի 23.09.2020թ. թիվ Փ-14-7/23-09-20 արձանագրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և ՀՀ կառավարության 16.08.2001թ. թիվ 762 որոշմամբ հաստատված կարգի 69-րդ և 71-րդ կետերով՝ ***որոշում եմ.***

Թույլատրել «Ռ և Հ Տրանս» ՍՊԸ-ին թիվ 2 միկրոավտոբուսային երթուղում շահագործվող Գազ-322132 մակնիշի, 34 OQ 572 պետհամարանիշի, դեղին հիմնագույնի համարանիշի՝ 2872 L, միկրոավտոբուսը փոխարինելու Գազ-322132-220 մակնիշի, 36 TD 381 պետհամարանիշի, դեղին հիմնագույնի համարանիշի՝ 2872 L միկրոավտոբուսով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2020 թվականի N 2102

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով՝ ***որոշում եմ.***

Գումարել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստ 2020 թվականի նոյեմբերի 25-ին՝ ժամը 11:00-ին, համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում հետևյալ օրակարգով.

1.Վանաձոր համայնքի ավագանու 2020թ. նոյեմբերի 25-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Մ.Ասլանյան

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 167-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Վ.Գրիգորյան

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 167-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Վ.Գրիգորյան

4.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի գոտիավորումը և գործակիցները սահմանելու, համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի, գույքի, ոչ բնակելի և բնակելի տարածքների վարձավճարների սակագները սահմանելու ևՎանաձոր համայնքի ավագանու 23 դեկտեմբերի 2019 թվականի թիվ 175-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ Վ.Դավիթավյան

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի «Վանաձորի Գրիգոր Հախինյանի անվան «Հորովել» ժողովրդական երգի-պարի համույթ» համայնքային ոչ առևտրային

կազմակերպության հաշվեկշռում հաշվառված գույքը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի «Վանաձորի տիկնիկային թատրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց տրամադրելուն թույլտվություն տալու մասին

զեկ. Գ.Բաղյան

6.Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գները սահմանելու մասին

զեկ. Ս.Աբովյան

7. Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

զեկ.Ս.Աբովյան

8.Վանաձոր համայնքի վարչական սահմաններում՝ Պ.Սևակի փողոց թիվ 55/1-1 հասցեի հյուսիսարևելյան մասում գտնվող 06-001-3832-0001 ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և փոստային հասցե տրամադրելու մասին

զեկ. Ս.Աբովյան

9.Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի պողոտա 54-23/1 հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող ավտոտնակի և դրանով զբաղեցված հողամասի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գները սահմանելու մասին

զեկ. Ս.Աբովյան

10. Վանաձոր քաղաքի թիվ 1 գերեզմանատան տարածքում պանթեոն կառուցելու նպատակով հողամաս առանձնացնելուն համաձայնություն տալու և պանթեոնի կառուցապատման հատակագիծը հաստատելու մասին

զեկ. Ս.Աբովյան

11.Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ.Մ. Ասլանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2020 թվականի N 2103

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 59/3-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՏԱՂԱՎԱՐԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԴԱՎԻԹ ՄԵՍՐՈՊԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դավիթ Մեսրոպի Ասատրյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 17092020-06-0045 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով, 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Աղայան փողոց, թիվ 59/3-1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 6.97քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 5.76քմ) տաղավարը 14640 (տասնչորս հազար վեց հարյուր քառասուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 6.97քմ մակերեսով հողամասը 20500 (քսան հազար հինգ հարյուր) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Դավիթ Մեսրոպի Ասատրյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Դավիթ Մեսրոպի Ասատրյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել տաղավարի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2020 թվականի N 2104

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 62-10/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՊԱՐԳԵՎ ՊԱՐՍԱՄԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Պարգև Պարսամի Հակոբյանի լիազորված անձ Արթուր Պարգևի Հակոբյանի դիմումը, 22.05.2020թ. թիվ 1198 (նոտարական ակտի կոդ: 594-20200522-90-4559010) լիազորագիրը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14102020-06-0036 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոց թիվ 62-10/10 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 17.28քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 16.29քմ) ավտոտնակը 44930 (քառասունչորս հազար ինը հարյուր երեսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 35.9քմ մակերեսով հողամասը 162420 (հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր քսան) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Պարգև Պարսամի Հակոբյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Պարգև Պարսամի Հակոբյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2020 թվականի N 2105

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3-2/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՄԵՆ ԺՈՐԱՅԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Ժորայի Սարուխանյանի լիազորված անձ Արտյոմ Մարտիկի Մամյանի դիմումը, 26.08.2019թ. թիվ 5832 (նոտարական ակտի կոդ: 763-20190826-90-4122043) լիազորագիրը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12102020-06-0023 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով և 35-րդ կետի գ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Բուսաբանական փողոց թիվ 3-2/2 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 11.5քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 7.91քմ) տնտեսական շինությունը 59800 (հիսունինը հազար ութ հարյուր) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 27.9քմ մակերեսով հողամասը 126220 (հարյուր քսանվեց հազար երկու հարյուր քսան) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արմեն Ժորայի Սարուխանյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Արմեն Սարուխանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել տնտեսական շինության և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2020 թվականի N 2106

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 30/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Աբրահամի Բաբայանի և Սոնիկ Սավոխի Բաբայանի դիմումը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 19.10.2020թ. թիվ Կ-19102020-06-0069 որոշումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2230843 վկայականը, 14.10.2020թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 2197 (նոտարական ակտի կոդ: 741-20201011-84-4760290) և թիվ 2198 (նոտարական ակտի կոդ: 741-20201011-84-4760289) վկայագրերը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց թիվ 30/[1] հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Աբովյան փողոց, թիվ 30/1-1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 նոյեմբերի 2020 թվականի N 2107

ՍՎԵՏԱ ԳԵՈՐԳԻԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Միքայել Հարությունի Դավոյանի կողմից ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 22.09.2020 թվականին կազմվել է զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Սվետա Գեորգիի Մովսիսյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 22.09.2020 թվականին կազմվել է զեկուցագիր այն մասին, որ Վանաձոր քաղաքի Վերածննդի փողոց թիվ 8 հասցեի խանութի սեփականատեր Միքայել Հարությունի Դավոյանի դիմումի համաձայն Վանաձոր քաղաքի Տարոն-2 թաղամաս, Վերածննդի փողոց, թիվ 8/1-1 հասցեի սեփականատեր Սվետա Գեորգիի Մովսիսյանի կողմից ինքնակամ կառուցվել է շինություն, սակայն Սվետա Գեորգիի Մովսիսյանի մոտ առկա են բոլոր օրինական փաստաթղթերը:

2020 թվականի սեպտեմբերի 22-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2020 թվականի հոկտեմբերի 06-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով ծանուցվել էին վարչական վարույթի մասնակիցներ Սվետա Մովսիսյանը և Միքայել Դավոյանը:
Վարչական վարույթին պատշաճ ծանուցված Միքայել Դավոյանը չէր ներկայացել վարույթի լսումներին, իսկ Սվետա Մովսիսյանին 23.09.2020 թվականին ուղարկված ծրարի հետադարձ ծանուցումը առկա չէր, որի հիման վրա Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 16 հոկտեմբերի 2020 թվականին ընդունվել է «Սվետա Գեորգիի Մովսիսյանի վերաբերյալ վարչական վարույթը կասեցնելու մասին» թիվ 1940 որոշումը:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի խնդիրներն են՝ գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը:
Յուրաքանչյուր դեպքում վարչական իրավախախտման գործ քննելիս վարչական մարմինը պարտավոր է պարզել կատարվել է արդյոք վարչական իրավախախտումը, արդյոք անձը մեղավոր է այն կատարելու մեջ, արդյոք նա ենթակա է վարչական պատասխանատվության:
Վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը պարտավոր է ապահովել գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները: Այդ հանգամանքները հաստատվում են վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցների հիման վրա, որոնք են ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով հաստատվում է վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Այդ տվյալները հաստատվում են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացատրություններով, տուժողի, վկաների ցուցմունքներով, փորձագետի եզրակացությամբ, իրեղեն ապացույցներով, իրեր և փաստաթղթեր վերցնելու վերաբերյալ արձանագրությամբ, ինչպես նաև այլ փաստաթղթերով:
Ընդ որում՝ վարչական վարույթի ընթացքում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում, վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Տվյալ դեպքում հարուցված վարչական վարույթի ընթացքում վարույթի մասնակիցները վարույթին չեն ներկայացել և վարչական մարմնին գործի քննության և լուծման համար որևէ ապացույց չեն ներկայացրել, ուստի վարչական վարույթը համարվում է եզրափակված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, 53-րդ, 58–60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ.

1. 22.09.2020 թվականին Սվետա Գեորգիի Մովսիսյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը վերսկսել և եզրափակել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

4. Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով համայնքի ղեկավարին և դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 20